Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22869-
22870

378
Ф-79

50

Printed in Turkey

2002

ԳԱՂԻԱԿԱՆ
ԱԿԱԴԷՄԻԱ

ՏԱՐԵԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ

ՀԱՌ

ՊԱՐՈՆ ԺԻՒԼ ՍԻՄՕՆԻ

Տեսրվեր Ակադէմիային

Թարգմանուած

ԵՐՈՒԱՆԴ Ս. ԱՍԼԱՆԵԱՆԷ

ՏՊԱԳՐ. Մ. Կ. ՍԱՐԳԵԱՆ

—

=1879=

2010

1361
378
Ժ-79

ԳԱՂԻԱԿԱՆ ԱԿԱԴԷՄԻԱ

ՏԱՐԵԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ

ՀԱՌ

ՊԱՐՈՆ ԺԻԼ ՍԻՄՈՆԻ

ՏՆՕՐԷՆԻ ԱԿԱԴԷՄԻԱՅԻՆ

Թարգմանութիւն

ԵՐՈՒԱՆԴ Ս. ԱՍԼԱՆԵԱՆԻ

ՏՊԱԳՐ. Մ. Կ. ՍԱՐԳԵԱՆ

= 1879 =

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս.Եկեղեցոյ
ՀՕՄՀ-ՍՕՐԱ,
Մեսրոպ Մաշտոցի
ԱՆՎԱՆԱԿՈՒՄԻ ՀԻՄՔ
3118
39

Ա. Զ Դ

Փունջի մէջ մասն առ մասն հրատարակեալ սոյն պատուական ճառն՝ զոր թարգմանած է աղնուամեծար Երուանդ Էֆէնտի Ս. Ասլանեան, և մեզ նուիրեալ է, արժան համարեցաք ամբողջովին ևս հրատարակել, յուսալով որ, սիրով կընդունուի՝ բարոյ և բարերարութեան սիրող պատուարժան աղգայիններէ։

Հ. Ս. Ս.

Printed In Turkey

ԳԱՂԻԱԿԱՆ ԱԿԱԴԷՄԻԱ
ՏԱՐԵԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ

ՇԱՌ Պ. ԺԻԼ ՍԻՄՕՆԻ
Տեսչի Ակադէմիային

Տե՛ր իմ,

Գաղղիոյ Էնրիէ-ն դրագիտաց, գիտնոց և արուեստագիտաց կաճառ մին է։ Սակայն աչքերնիդ վերուցէք անդամ մը սա՛ դիմացս բարձրը դրուած կիսարձանին վրայ։ Կտեսնէք որ զԱռաքինութիւն կներկայացունէ նա՝ սիրուն և պարկեշտ կնոջ մը դէմքով։ Ասել չէ՛ որ մենք մեր երկասիրութեանց մէջ ամեն բանէ առաւել խիստ առաքինի ըլլալու հոգածութեան պարտաւորեալ ենք և զայն միայն ուսուցանել այլոց. գիտութիւնը, բանաստեղծութիւնը կան և մնան ինքնին և

իրենց համար. բայց եթէ դիտունն, արուեստագէտն և բանաստեղծը կորոնեն և կը դտնեն ճշմարիտն ու գեղեցիկը, կը դտնեն միանդամայն և բարին, զի ճշմարիտ, գեղեցիկ և բարի անբաժանելի են ի միմեանց։ Երբեմն քաստակոր հոն-ճարէ, սոսկալի Գլուխ գործոց (չէ՛ տ'էօվը)-ներու խօսք կըլլայ։ բայց ասանք չեն կրնար ստուգիւ գլուխ գործոց եղած ըլլալ, եթէ չեն կարող բարձրացուցանել և աղնուացուցանել զհոգիս։ Ուրեմն Առաքինութիւնն այս տեղ մեր մէջ իր տեղն է, ոչ խորախորհուրդ մտքով զետեղուած, այլ պարզ և ճշմարիտ մտածութեամբ մը, որ ներշնչած է զՄօնթիյօն՝ երբ նա Առաքինութեան վարձատրութիւններ հաստատել ուզելով՝ Ակադեմիայի՛ս յանձնեց զանոնք բաշխելու պաշտօնը։

Ի հնարհս անոր՝ մեր տարեկան նիստերն երկու մասն կրաժնուին այժմ։ Մեր մշանջենական Քարտուղարն կհրաչակէ նախ տարւոյն մէջ հրատարակեալ

գեղեցիկ գրքերը գովեստիւք որ թանկագին են քան մեր տուած մրցանակները. և ապա մեր Տնօրէնը կպատմէ մէկ քանի գեղեցիկ գործեր, մէկ քանի աղնուական վարք. ո՛չ այն մեծամեծ գործերը որ ամբողջ ազգ մը կը փրկեն և կանցնին կերթան յապագայն, այլ բարի գործեր, աննշան անձնուիրութիւններ, փրկարար օրինակներ, ո՛չ հարուստին բարեբարութիւնները որ իւր աւելորդէն կառատաձեռնէ, այլ աղքատին առատաձեռնութիւնը, երբեմն նաև շռայլութիւնը՝ որ ոչի՛նչ ունենալով հանդերձ կը դտնէ դարձեալ պարգևելու միջոցներ. ո՛չ տարւոյն մէջ կատարուած ամենէն գեղեցիկ գործերը, այլ մեզ յայտնուածներուն ամենէն գեղեցիկները. վասն զի Ակադեմիան չունի Առաքինութեան խուզարկու յանձնախմբեր, չունի նաև ամեն տեղ գործուած գեղեցիկ գործերն ու բարիքն իրեն կանոնաւորապէս հաղորդելու պաշտօնով թղթակիցներ։ Մեր վարձատրեալներն մեզ

երբէք չեն մոռացեր, շատերն մեր գոյութեան իսկ անտեղեակ են և երբ վարձք կստանան, այն ատեն կը տեղեկանան և թերևս դարձեալ չպիտի կըրնան ճշդիւ հասկնալ երբէք մեր ի՛նչ ըլլալը։ Մենք ընտրանօք կը գատենք, Տեա՛ր իմ, մեղ ներկայացուածներուն մէջէն, սակայն և այնպէս մեր հունձքը առատ է։

ԷԹԻԷՆ ՄԷԿՈ

Այս տարի մեր վարձատրելոց ցուցակին գլուխը արձանագրուած է Աղատիչի մը անունը։

Գաղիոյ մէջ Աղատիչները պակաս չեն, մեր քաջ նաւաստեաց սովորական առաքինութիւնն է միշտ պատրաստ ըլլալ իրենց կեանքը վտանգի ենթարկելու՝ ծովէն զոհ մը յափշտակելու համար։ Բայց Էթիէն Մէկո շատ կանուխ սկսաւ։ 1834 փետրվարի մէջ՝ դեռ եօթտասա-

նամեայ՝ ինքզինք Ռօն գետը կնետէ որ սառոյցներով ծածկուած էր, հինգ տարեկան տղեկ մը ազատելու համար։ 39ին Ա-ը քաղաքին մէջ մէկը կազատէ որ գետամոյն ինքզինք խեղդել կը ջանար և յուսահատաբար կռուելով Մէկոի հետ՝ փոքր միւս ևս և, անոր մահուան պատճառ կըլլար։ Նոյն տարւոյ դեկտեմբեր 6ին նաւաստի մը գետը կիյնայ. Մէկո հագուստներէն մերկանալու ժամանակ չկորսնցունելով՝ անմիջապէս կը նետուի ջուրը և յորձանքին ուժգնութեան դիմադրաւ կը հասնի կը բռնէ մարդը, և ազատ մնացած միակ ձեռքով ուժգին լողալով գետեղրը հասնելու կը ճգնի։ Ռօնին հետ մարտնչիլ ալէկոծութեան ժամանակ և այսպիսի պարագայի մէջ, անկարելի կթուէր. ուստի գետին երկու եղերքը ժողովուրդը խուռն բազմութեամբ անձկանօք կը դիտէր Մէկոին զօրութեան վայրկեան առ վայրկեան նուաղումը, վերջապէս նաւաստի մը ամենամեծ վտանգով կը յաջողի անոր պա-

ռանի մը ծայր նետել, և ամենը մէկէն
կաղատին մահուանէ։ Մէկռ այս քաջա-
սրրտութեան գործին համար ընկալաւ
իր առաջին վարձատրական շքադրամը։
Հարաւային դաւառաց ողողման միջոցին
Մէկռ անդր աճապարած էր, և ընկուղի
կեղևի նման փոքրիկ նաւակի մը մէջ կամ
պարզապէս ջուրին երեսը լողալով՝ ամեն
տեղ ալեաց կատաղի կոհակներուն դի-
մադրաւ, բարձր տեղուանք տանիքներու
վրայ ապաւինած կանայք և մանկունք
փրկելու կաշխատեր։ Իր օրինակն այլոց
աղատչաց արիութեան և աշխատութեան
յորդոր կըլլար։ Իր հայրենակիցներէն
բազմութիւն անձինք անոր շնորհիւն ազա-
տած են մահուանէ։ Այս առթիւ Տէրու-
թիւնն անոր շնորհեց Ա. կարգի ոսկի շը-
քադրամ մը։ Հետևեալ տարին՝ 42ին
Մէկռ պատերազմական Սինեռ (Կարապ)
անուն երկկայմ փոքրիկ նաւուն վրայ
ղեկավարի դլխաւոր օգնականի պաշտօն
կը վարէր, նաւատի մը պատահմամբ ծո-
վը կիյնայ, Մէկռ անմիջապէս կը նետուի

ետևէն և կը բռնէ զայն։ բայց ժամա-
նակ պէտք էր նաւուն կայնելու և մա-
կոյկ իջեցունելով դասնք ծովին երեսէն
ժողովելու համար, Մէկռ 20 վայրկեա-
նէն աւելի իր ընկերն ջուրէն վեր բըռ-
նեց կեցաւ։ Այս քաջագործութիւնը իր
համբաւն վերջին ծայր բարձրացուց,
ծովային պաշտօնակալաց և նաւաստեաց
մէջ սկսաւ իրը առակ ըսուիլ թէ «Մէկ-
ռէն մէկ հաղարամեթը հեռու ներելի
չէ ընկղմիլ»։ 47ին ալ երիտասարդ մ'ա-
ղատեց որ ալէկոծութեան մը միջոցին
Ռօն գետն ինկեր էր։ Առլի վաճառա-
կանական դատարանի նախագահն, ծո-
վածոցի հրամանատարի տեղակալն, վա-
ճառականներ և նաւաստիներ մասնաւոր
հանրագրով Պատուոյ Լեգէոնի ասպետու-
թեան Նշան-խաչ խնդրեցին Մէկռի հա-
մար, և Տէրութիւնը շնորհեց 1852ին։
59ին Մէկռ Ֆրոսինէ ընկերութեան Տէ-
բոնո անուն շոգենաւուն հրամանատարու-
թեամբ Մարսիլիայէն դէպ ի Նարբոնի կը
նաւարկէր, երբ Սեն Թրոբէզ ծովածոցին

մէջ սաստիկ փոթորկի մը հանդիպեցաւ։ Իրիկուան ժամը 6 ին ժամանակները, նաւաստի մը նաւուն առաջակողման կայմի առագաստը ժողվելու միջոցին հաւասարակշռութիւնը կորսնցուցնելով ծովը կիյնայ։ Բարեբաղդաբար անկումը տեսնուեցաւ, թէև մութը կոխեր էր։ Նաւապետը անմիջապէս աղատութեան ամեն կարեւոր միջոցներն ձեռք առաւ։ Նաւն դէպ ի ա՛յն կէտը ուղղեց ուր նաւաստին աներեւութացած էր ծովուն մէջ. ծովը նետել տուաւ որքան խարսխի նշան և այլ ինչ որ կար որ կրնային օգտակար ըլլալ, և աճապարեց մակոյկները իջեցնել տուաւ ծովը որպէս զի նաւաստին աղատելու աշխատուի. սակայն ոչինչ չկրցաւ կենալ ծովուն վրայ, զի ալիքն՝ զայրացեալ՝ ամեն բան նաւուն կողերուն վրայ կը նետէին և կը ջախջախէին, այնպէս որ, փոքր միւս ևս՝ նաւաստիներն ալ պիտի խեղդուէին։ Ծովն ինկած խեղճ նաւաստին երբեմն երբեմն ծովուն երեսը կելնէր, և յայտնի կը

տեսնուէր որ ճգունքը ղգալապէս նուաղելու վրայ էին։ Նաւապետն Մէկռ տեսնելով որ այս ամենայն միջոց ապարդիւն կը մնան, յատկեց նետուեցաւ ծովը ըզ նաւաստին փրկելու կամ անոր հետ մեռնելու համար։ Աղաղակ մ՝ ելաւ ամեն կուրծքերէ և խառնուեցաւ մրրկի մռնչմանց հետ. դիւցազն Աղատիչը յաջողեցաւ հակառակ ամենայն յուսոյ։ Երբ իր աղատածին հետ մէկտեղ նաւուն վրայ երևցաւ, երկու յորոյեալ մէկէն տեսնալ կարծեցինք, կըսէր իր մարդոց մէկը։ Բայց այս՝ Մէկռին վերջին յաղթանակը չէր մահուան վրայ։ Հետևեալ տարին Մառօքի և Սպանիոյ մէջ ծագած պատերազմի միջոցին, Մէկռ բազմաթիւ զինուորաց և նաւաստեաց կեանքն աղատեց, և այս ծառայութեանն համար Իզապէլ լա Քաթոլիկ ըսուած նշանին արժանացաւ։ 1865 ին, Լարռօվանս նաւուն Սէն Ժան բերդին ժայռերուն խորտակման միջոցին Մէկռ առաջինն եղաւ նաւաբեկելոց օգնութեան

հանող։ Իր իրաւունքն է՝ իրաւունք աղ-
նուաբար վատակուած, առաջինն հան-
նիլ ուր որ անձնուիրութեան կամ քա-
ջասրտութեան կարօտութիւն կայ։ Ա-
կադեմիայի Մ. Մէկռին կընծայէ իր ա-
մենէն բարձր մրցանակը որ է 2000 ֆը-
ռանգնոց չքաղրամ մը։

Անցնինք ուրիշ տեսակ քաջասրտու-
թեան մը. պիտի տեսնէք թէ նուազ
գարմացման արժանի չէ։ Ակադեմիան
1000ական ֆրանգնոց 3 չքաղրամ կը
շնորհէ. Ա. ը՝ Թուէն անուն երկու քերց մի-
ահաղոյն, որք Շոռանդ Էնֆերէօր դաւառին
Մօռլոռ քաղքին մէջ որբանոց մը հիմնե-
ցին։ Բ. ը ԲօլՏը Վէրմ օրիորդին որ նմա-
նապէս որբանոցի մը հիմնադիրն է Պօվէի
մէջ։ Եւ Գ. ը Լէոնդէն Նէոլ օրիորդին որ
Սալբէթրիէր անկեղանոցին մէջ պարզա-
պէս վերակացու մ'է։

ՎԻՐԺԻՆԻ ԵՒ ԷԼԷՆ ԹՈՒԷՆ ՕՐԻՈՐԴԻՔ

Վիրժինի և Էլէն Թուէն օրիորդները

պատուաւոր ընտանիքէ սերեալ, չքաւո-
րութեան մէջ ինկած էին, հիւանդոտ
հայր մը և կոյր մայր մ'ալ ունենալով ի-
րենց խնամոցը կարօտ։ Անդրանիկն 30
տարեկան հաղիւ կար։ Այս վիճակին մէջ
լքեալ անտէրունչ մանկանց վրայ գութ
դդալով և տեսակ մը մայրական բնազ-
դումէ շարժեալ, որբանոց մը հիմնելու
և զանի կալուածներով միանգենապէս
հաստատելու խորհուրդն յղացան. խոր-
հուրդ որ հարուստ անձինք խրատուցանե-
լու բաւական էր։ Բայց մարդու չյայտ-
նեցին այս խորհուրդը, զի խեղկատոյս
պիտի նկատուէին ամենէն։ Սկսան խա-
նարհաբար պարզ պահակութեամբ մը։
Նախ փոքրիկ տուն մը վարձեցին և Ցբա-
Ռուշել է ոբ Սէնի անկեղանոցներէն երե-
սուն երեք աղջիկ մանկիկներ ուղեցին
առին պահելու, որոց մէջ 2 տարուընէ
փոքրիկներ ալ կային և որոց մեծ մասը
հիւանդոտ և խեղանդամ. խոստանալով
ամենն ալ մայրական խնամօք սնուցա-
նել և 21 տարեկան հասակի հասնել.

նուն՝ պատուաւոր ընտանեաց կամ դոր-
ծարանաց մէջ տեղաւորել իբրև սպա-
սուհի կամ մանկամնամ և կամ դոր-
ծաւոր։

Երբ անկելանոցներն կպարտաւորին
այսպէս դուրս տալ իրենց յանձնուած
որբոց մէկ մասը՝ դաւառը փոքրիկ ամ-
սական մը կը յատկացունէ, ամսական մը
որ հաղիւ կը բաւէ խեղճ մանկանց ու-
տեստի և այլ պիտանի խնամոց։ Հաղ-
ուագիւտ են այն կանայք որ այսպիսի
մանկունք կառնուն խնամելու, և իրենց
ապրուստն այս տաժանելի արուեստին
մէջ ընտրելով արժանապէս կը կատարեն
իրենց պարտաւորութիւնները։ Ի զուր
պաշտօնական այցելութիւններ կը յա-
ճախեն և ամեն տեսակ զգուշութիւններ
ձեռք կառնուին, և ամեն տեսակ տեղե-
կութիւններ ստանալու հոգ կը տարուի։
Ամենէն բարեսիրտները մարդասիրու-
թեամբ կը վարեն իրենց պաշտօնը. իսկ
ուրիշներն կաճապարեն օգուտ քաղել
խեղճուկ մանկիկներուն նորածին զօրու-

թենէն, յաճախ ի վնաս անոնց առողջու-
թեան և ապագային։ Բայց օրիորդք
Թ-էն արհեստ մը չէին բաներ, այլ կոչ-
ման մը կը ծառայէին։ Առջի օրէն ցոյց
տուին թէ որբերն իրենց ճշմարիտ մայ-
րեր դաներ էին ի նոսա։ Ցան բոլոր ըս-
պասներն միայնակ իրենք կը վարէին.
խոհանոցի խնամքը՝ հա՛րկաւ աղքատ
խոհանոց մը, ինչպէս նաև տան ուրիշ
ծառայութիւնները իրենք կը կատարէին,
ամեն կողմ մաքրութիւն կը տիրեր։ փոք-
րիկ մանկանց վերքերն իրենց ձեռօք կը
պատէին, և չէին զանց առներ նաև տը-
ղոց ձեռքը այրբենարան տալ և կրօ-
նական դաստիարակութեան սկզբնաւո-
րութիւն ընել։ Երթալով փոքրկունք կը
մեծնային. այն ատեն ձեռքերնին մէկ
մէկ ասեղ կը տրուէր, և ամենէն հասա-
կաւորներն ու զօրաւորները պարտիզի
աշխատութեանց կը պարապէին։ Այս-
պէս փոքրիկ դաղթականութիւնը իր
ապրուստն ինք կը հոգար համաշխա-
տութեամբ, և սկսաւ քիչ մը արդիւնք

3118
39
ՀԱՅ-ՍՕՐԱ.
Ազգ. Գրադարան
Ա. Մելիքեանի

ալ աւելցունել, զոր երկու քրոջ մէկը
շաբաթն երեք անգամ կը տանէր մերձա-
կայ տօնավաճառները ծախելու։ Երկու
քոյր քաղցրութեամբ կը կառավարէին
իրենց հասարակութիւնը, միանգամայն
խստութիւնն ալ ձեռքէ չէին ձգեր,
այնպէս որ ամենը դիրենք կը սիրէին մի-
անգամայն և կակնածէին։ Ամեն բանի
մէջ այնքան կարգաւորութեամբ և խը-
նայողութեամբ կը վարուէին որ չքաւո-
րութիւնը խիստ քիչ անգամ կայցելէր
այս տանը. և երբ կը պատահէր որ այդ
եղնէր, զրկանքը տիրուհեաց համար էր
միայն, զի նոքա ամեն հնար ի գործ
կը դնէին տղաքն անկէ աղատ պահելու
համար։ Շուտով բեթակն սկսաւ գեղին
և գաւառին աքանչացման առարկայ ըլ-
լալ։ Բարեգութ անձինք յօգնութիւն
դիմեցին այս պատուական և սրտաշարժ
բարեգործութեան, բայց յաջողութեան
դալը տեսնելով առատասիրա օրիորդք
թուլնալ հեղգալու միտում չբրին։ Ընդ-
հակառակն իրենց տան սպասուհիք մը-

նալով միշտ, ժամանակ կը դտնէին դուր-
սը ալ գթութեան քերդ նման պաշտօն
վարել, և յետին աղքատ գեղջկուհեաց
նման կեանք կը վարէին։ Երբ իրենց
անձին քիչ մը հանգիստ տալու խնդիր
ընող կըլլար, կամ փոքր ինչ դիւրու-
թիւն ընծայելու առաջարկութիւն, զը-
ուարթ դիմօք կը պատասխանէին թէ
«իրենց յատուկ պատճառն ունէին այս-
պէս վարուելու»։ Իրենց յատուկ պատ-
ճառը՝ Տեա՛ր, այլ ևս դաղտնիք մը չէ՝.
Երկար ատեն ապրուստնին ճարելու հա-
մար աշխատելէն ետքը՝ հարստանալու
համար աշխատիլ կը շարունակէին։ Ըս-
տուգիւ այս հրաշքը դործելու ճանրան
մտեր էին, սկսեր էին ստակ դիզել։
Այսօր այն տանը, որու ի սկզբան վար-
ձակալն էին, սեպհական տէրն են, հան-
դերձ մէկ քանի արտավար դետնով։
Իրենց կտակն արդէն դրուած է որով
որբանոցին կը թողուն այս փոքրիկ հա-
ըստութիւնը։ Այս վիճակին հասնելու
համար 30 տարի պէտք եղաւ իրենց,

30 տարի անձնուիրութեան, անդադար աշխատութեան, և յաճախ դժնդակ վաստակաբեկութեան։ Սակաւ առ սակաւ իրենց ընտանիքը բաղմացաւ։ Անկեղանոցէն առաձնուն զատ ծնողքնին ծանուցեալ որբեր ալ կընդունին այժմ իրենց տանը մէջ, ամենէն անտէրունչներն ու ամենէն խեղանդամներն նախադասելով այլոց։ Իրենց նախկին խնամեալներն զորս մերձակայ ագարակաց մէջ տեղաւորած են, կուգան երբեմն երբ վայրկեան մ՝ազատութիւն ունենան՝ դիրենք տեսնելու, ինչպէս մարդ կը դառնայ իւր հայրենի բնակարանը։ Իրենք ալ անոնց այցելութեան կերթան մայրենի դորովով և հոգածութեամբ, երբ պէտք կունենան նոքա կամ կը հիւանդանան. հեռաւորութիւնն ալ արգելք մը չէ անոնց փոխադարձ այցելութեանց։

Մեզ այս տեղեկութիւններն հաղորդողները, սիրով կը խօսին ա՛յն բարեգործութեանց վրայ զոր այս երկոքին հարազատք կը սփռեն իրենց չորս կողմը։ Միշտ պատրաստ են ամենէն վտանգաւոր հիւանդաց խնամք տանելու և ամենէն դղուելի վէրքերն պատելու։ Վիրժինի բաղմաթիւ անձինք ազատած է մահուանէ. անգամ մ՝ալ նաև ինքզինք ջուրը նետած է խեղդուող կին մը փրկելու համար։ Բայց մենք այս բարի գործերն հաշուոյ մէջ չենք առներ, որք սքանչելի են ինքնին։ Որբանոցը զոր հիմնեցին, մեզ բաւական է, և անոր կը հանենք Մօնթիյօնի բարերարութենէն բաժին մը՝ յուզմամբ սրտի, որոյ դուք ալ կը մասնակցիք անշուշտ։

ՕՐԻՈՐԴ ԲՕԼ ՏԸ ՎԻՅԷՐՄ

Այս օրիորդ որբանոց չհիմնեց. ասոր հիմնածը առաւել ձրիավարժ կրթարան մ՝է աղքատիկ աղջկանց։ Օրիորդ Բ. Տը Վիյէրմ նշանաւոր ընտանիքի մը անդամ, ի մատղաշ հասակէն հարուստ ժառանգորդ մ՝ըլլալու սահմանուած կը

թուէր, սակայն ձախորդութիւնք հետզհետէ վրայ հասնելով, անոր հարստութիւնն իջեցուցին պարկեշտ դումարի մը որ 40,000 ֆրանք հազիւ կը հաշուի։ Բայց նա դրեթէ բաղդէն վրէժ առաւ՝ այս չափաւոր ստացուածքով միլիոնաւորի բարիք ընել յաջողելով։

Մենք այս օրիորդին վերաբերեալ դրութեանց մէջ նամակ մը գտանք, զոր նա առ իւր մէկ բարեկամն ուղղած էր և որ ներելի անխորհրդապահութեան մը շնորհիւ յիշեալ դրութեանց մէջ սրպերդած էր։ Օրիորդ Բ. Տը Վիլլերմ վեհանձն է։ չուզէր որ ղինքը գովեն, մենք ալ չպիտի գովենք զնա։ Բայց ըստ որում այս նամակն ձեռքերնիս է, մէջէն մէկ քանի պարբերութիւն կը կարդանք, բաւական են հաստատութիւնն և հիմնադիրն միանգամայն մեզ ճանչցնելու։

«Այս հաստատութիւնը՝ կրսէ օրիորդ Բօլ Տը Վիլլերմ՝ ի սկզբան պարզ աշակերտանոց մ'էր, ուր 25 ի չափ աղ-

ջկունք կը վարժուէին առտուան ժամը ութէն մինչև դիշերուան ութը, բայց առաջին յաջողութեանցս ազդած վստահութիւնը փափաքներս աւելցուց և այնպէս թուեցաւ ինձ որ աւելի կատարեալ բարիք ըրած կըլլամ եթէ բոլորովին ներս ընդունիմ մատաղօրեայ աղջկունքն, մանաւանդ որբ և անտէրունչներն, և զանոնք ընտանեկան կեանքի սովրեցընեմ և կնոջ մը ընտանեկան անձնուիրութեան բոլոր գաղտնեաց վերահասու և ամեն աշխատութեանց վարժ ընել աշխատիմ, մանաւանդ արդի ժամանակիս մէջ ուր փայլելու և երևնալու փափաքը շատ մայրեր իրենց մատաղ աղջկանց թեթև և սնոտի դաստիարակութիւն տալու կառաջնորդէն։ Ես միայն 10-11 տարեկան երբեմն նաև մինչև 4-5 տարեկան աղջիկներ կընդունիմ, պատուաւոր ընտանեաց և օրինաւոր ծընունդի զաւակներ, և մինչև 21 տարու կը պահեմ։ Ամենն ալ կը վարժուին ուսմանց, ձեռագործի, կերակրոյ համա-

դամի և լուացքի գործողութեանց։ Բը-
նաւ երբէք օտարական մը չընդունուիր
մեզ ի գործակցութիւն. տան ամեն ըս-
պասք մատաղերամ աղջկանց ծառա-
յութեամբ կը կատարուին։

Երջանկութեամբ կը տեսնեմ օր
աւուր հաստատութեանս յառաջ բերած
արդիւնքը։ Մեր տունէն ելած աղջկանց
և մեր մէջ սիրակցորդ յարաբերութիւնք
չեն ընդհատիր երբէք, և անոնք որ
այսօր ընտանեաց տէր եղած են, ինձ
քաղցր մխիթարութեանց աղբիւր կը
հանդիսանան։

Ճշմարիտ և հաստատ բարեպաշ-
տութիւնը հիմն է դաստիարակութեան,
և բարեպաշտութիւն ըսելով, մարդուն
իր բոլոր պարտիքը կատարելը կը հաս-
կընամ, հակառակ ամենայն ձանձրու-
թեան և ամենայն վաստակոց որ կրնան
յառաջ գալ անկէ, դի ես ուրիշ նշանա-
բան չեմ ճանչնար, այլ սա՝ միայն.
«ճանաչումն պարտուց, նախ քան զա-
մենայն ինչ, յամենայնի, և հանապազ։»

Պօլէի վարժարանին ինչպէս նաև
Մարկարի որբանոցին համար հրաշալի
կէտը ծախքերն հոգալու միջոց գտնը-
ուելուն մէջն է. Պօլէի աշակերտուհիք
քառասուն լիսունէն պակաս չեն թուով
և տարեկան ծախքը 15000 ֆրանք կը
հաշուի. այս տեղ անկելանոց ալ չկայ
որ դուն ուրեք դրամական նպաստ ընէ
վարժարանին. հապիւ երկու երեք ա-
շակերտ գտնուած են որ տարեկան թո-
շակ կը վճարեն, և այն՝ երբէք 200
ֆրանքէն աւելի չէ եղած. քաղաքին
վարչութիւնը նպաստ մը ուղեց յատկա-
ցունել, բայց վեհանձնաբար մերժուե-
ցաւ. աշակերտաց աշխատութիւնը և
վաստակը կը բաւեն ամենայնի ընդ-
մասնուն տնտեսութեամբ ուշիմ և ա-
րիասիրտ կնոջ մը որ արիաբար նուիրած
է զանձն աշխատութեան, և ամենուն
օրինակ բարի կը հանդիսանայ խրատա-
կեաց կենցաղավարութեան, անխոնջ
անձնուիրութեան և անսպառ ողորմա-
ծութեան։

Բայց արդ ձգենք այս պայծառ վայրերը։ Մարկար և Պովէ զուարճութեան տեղիք չեն, անդ շարունակ աշխատութիւն կայ և խստակեաց ապրուստ. Որբանոցէն ելնելէն ետքն ալ ուրիշ վայելք չկայ, կամ իբրև սպասուհի տան մը ծառայութեան և կամ իբրև գործաւոր գործարանի մը մէջ աշխատութեան մլատնելու է. սակայն ամենայն ինչ քաղցր կըլլայ պարտուց կատարման ճանաչողութեամբ, վերակացուաց մայրական սիրոյ դորովով և ընկերաց փոխադարձ ջերմ համակրութեամբ։ Մտնենք այժմ Սալբէթրիէր անկելանոցին մէջ, մնաք բարեա՛ւ ըսենք առողջութեան, աղատութեան, զուարթութեան և մինչև իսկ երիտասարդութեան, վասն զի երիտասարդ աղջիկներ չե՛ն այս տեղ պատրաստարեալ խեղանդամներն և լուսնոտները։ Փարիզ վերջին տարիներուս մէջ հոյակապ հիւանդանոցներ հիմնած է, և պարծանօք կրնայ ցոյց տալ աշխարհի Սէնթ Անն անկելանոցը, Վէլ Էվրու և

Օրէլ Տէյ հիւանդարանները։ Բայց ի վաղուց մնացած շէնքերը այնքան կանոնաւոր չեն թէև մասնակի նորոգութիւններ կատարուեցան, միջնորմ անջրպետներ վերցուեցան, տեղ տեղ պատուհանները բացուեցան, բայց դարձեալ ժամանակիս գիտութեան պահանջած առողջական պայմանները կատարելապէս ձեռք բերել անկարելի եղած է։ Սալբէթրիէր որ ԺԴ. Լուդովիկոսի օրով իբր ղինանոց շինուած է՝ բաւական ընդարձակութիւն ունի, կրնայ ըսուիլ նաև որ հոյակապ է շէնքը, բայց տղոց յատուկ եղած բաժինը խղճալի վիճակի մէջ է։ Այս թշուառ էակները թուով 120 փոքրիկ աղջկունք՝ խոնաւ և մթին սրահներու մէջ կուտակուած են լուսնոտ և ապուշ խառն, բայց ասոնք առաւել յուսալու կրնան ըսուիլ քան թէ պիտի, որով շարժում ընելու բաւական ասպարէզ և միջոց չունենալնին տաժանելի տանջանք է իրենց համար. ամառը գոնէ մէկ քանի ժամ արև կը ծագի վրանին, բայց

ձմեռը տխրութեամբ կանցունեն օրերնին օդը ապականեալ և նեղ սրահներու մէջ ուր լոյսն անդամ բաւական չը թափանցեր, և վրանին կը հսկեն վերակացուներ որ ստուդապէս ո՛չ այլ ինչ են այլ պահապաններ և պարզ սպասուհիներ։ Իրաւունք ունի մարդ հարցունելու թէ ի՛նչպէս կը դանուին այսպիսի պաշտօններ ընդունելու չափ լրբեալ թշուառ կանայք. մի՛ կարծէք որ փոխարէն տրուած վարձը մեծկակ ոսկեդումար մըն է։ Ամբողջ կեանքը այս թշուառ աղջկանց մէջ անցունելու դատապարտեալ և անոնց չարունակ խնամք տանելու կամ ղսպելու և դրեթէ երբէք համակրութեան և շնորհակալութեան ցոյց չսպասելով, յարաժամ անոնց ցաւերը տեսնելու և մռիկ ընելու պարտաւորեալ՝ երկրորդ կարգի վերակացու մը տարին միայն 360 ֆրանք ռոճիկ կը ստանայ որ գործաւոր աղջկան մը տարեկանէն ալ պակաս է, սակայն և այնպէս այս պաշտօնին թեկն ածողներէն կը պա-

հանջուի որ պատուաւոր կեանք ունեցած ըլլան, քիչ շատ դաստիարակութիւն առած և բաւական զօրաւոր կազմուածք ունենան, որպէս զի այս գերութեան տոկալու և անդադար աշխատութեան դիմանալու կարողանան. գէշ չըլլար նաև եթէ ուժեղ և հաստամարմին ալ ըլլան, վասն զի պէտք կըլլայ երբեմն հիւանդաց հետ մարտնչիլ։ Կերևի որ այս պաշտօնին համար ալ հեռամուտ թախանձողներ կը գտնուին. ասի պէտք է երջանիկ ապերջանիկ ամեն մարդ գիտնան և իրարու խմաց տան որպէս զի ամեն մարդ իր վիճակէն գոհ ըլլալ սովրի։

ՕՐԻՈՐԴ ԼԷՕՆԹԻՆ ՆԻԲՕԼ

Օրիորդ Լէոնդին Նիբօլ որ թէև օրինաւոր դաստիարակութեամբ զարդացեալ, բայց թախանձանօք խնդրած է Սալբէթրիէրի մէջ երկրորդական վե-

բակացութեան պաշտօնն, անհամբեր ըս-
պասած պարապորդին և զուարթ սրտիւ
նեռուած այս դժոխքին մէջ։ Բայց նա
դաղտնիք մ'ունէր, զոր ես ձեզ հիմայ
կը յայտնեմ. սա՝ մայր մ'ունէր որ հա-
լածական կոչուած տեսակէն յիմարու-
թեամբ ախտացեալ էր, Լէօնդին չէր
կրնար զայն իր քովը պահել, ուստի
խնդրեց և յաջողեցաւ Սալբէթրիէր ըն-
դունիլ տալ զնա. անկէ ետքը իր բո-
լոր ուշը այն տեղ մտնելու վրայ դրաւ,
որպէս զի կարող ըլլայ դարձեալ իր խը-
նամքը նուիրել իր մօրը. և յաջողեցաւ.
ընդունեցին զինքը և ձեռք առաւ իր
տխուր պաշտօնը։ Քանի որ մայրը ողջ
էր, օրիորդ Նիքօլ ամբողջ օրը կանցու-
նէր իրեն յանձնուած ապուշ պառաս-
պարելոց քով, և այս դժուար աշխա-
տութենէն քիչ մը հանգիստ առնելու
համար իրեն շնորհուած մէկ քանի վայր-
կեանները կը վաղէր անցունել իւր մօրը
քով, այսպէս մարտիրոսութենէ ի մար-
տիրոսութիւն փութալով և դարձեալ եր-

ջանիկ զանձն համբերելով, վասն զի իր
որդիական պարտականութիւնը կատա-
րել կը կարողանայր։ Այս տաժանելի
կեանքը 27 տարի տևեց, թշուառ յի-
մարը անցեալ տարի իր հոգին աւանդեց
իր աղջկանը գիրկը զոր հազիւ կը ճանչ-
նայր և որոյ խնամքը զարհուրանօք կը
մերժէր իր զառանցանաց վայրկեաննե-
րուն մէջ։ Ահա 28 տարի բոլորուեցան,
յորմէ հետէ օրիորդ Նիքօլ Սալբէթրի-
էրի մէջ վերակացուի պաշտօն կը վարէ.
նա սէր տուածէ այս հաստատութեան
և յարեալ իր պաշտօնին, այնպէս որ
ամենայն համբերութեամբ պատսպար-
եալ թշուառներն աղատելու յուսով աշ-
խատած է և այսօր կը դանուին 500 էն
աւելի իր ձեռքէն ելած թշուառուհիք՝
որ առողջացեալ դուրս ելած են Սալ-
բէթրիէրէն, և կը յաջողին իրենց ապ-
րուստը ճարել։

Սալբէթրիէրի վարչութիւնը որ ի-
մաստուն և հայրախնամ անտեսութիւն
մ'է, բայց կանոնադրութիւններով կաշ-

կանդեալ, յաջողեցաւ վերջապէս վերջին օրերս վերակացութենէ վարժուհիութեան վերածել օրիորդ Նիքոլի պաշտօնը, ասկէ եւս անոր տարեկանը պիտի ըլլայ 900 ֆրանք և թերևս առաւել։ Նա այս նոր աստիճանին մէջ միևնոյն աշխատութիւնը պիտի ընէ ո՛չ աւելի և ո՛չ լաւագոյն դի անհնարին է։ Ինչ կեանք, Տեա՛ր իմ, ինչ նորընծայութիւն և ինչ վարձատրութիւն։ Ակադեմիան, խորին յարգանօք առաքինութեան մրցանակը կընծայէ Օրիորդ Լէօնդին Նիքոլին։

ԼՈՒԻ ՎԸՕՅԼԱՆ

Տիւնքէրկի շրջանակին մէջ Պուրպուր քաղաք և Պուրպուր դիւղ՝ ձեռքերնիս եղած վկայագրերուն նայելով հաճոյական ըլլալու արտօնութիւնն ունեցող տեղեր չեն։ 1866 ին Քօլէրան այս տեղուանքն այնպիսի կոտորած մ՝ըրաւ

որ բժիշկին մէկը աղքատիկ տան մը դրնէն ներս մտնելու առեն՝ ուր հայը մը իր ութը զաւկներով հիւանդ պառկած էին, «Ուրեմն ամենիս ալ պիտի կորնչինք» դոչեց։ Երեք տարի եռքը ծաղէ հիւանդութիւնը կուգայ կը ճարակի ո՛չ նուազ քան ղ-օլէրա մահաբեր. անկէ եռքը ֆէնվ-ՐԷֆՅԷ ըսուած ջերմախտը՝ որ մշտակայ է այս տեղուանք ստորերկրեայ ճախճախուտներուն պատճառաւ։ Ուրիշ աղէտք մ՝ալ եկաւ աւելցաւ այս հիւանդութիւններուն. յաճախ տեղւոյն հունձքերը հրոյ ճարակ եղան, և ա՛յս՝ վեց եօթն անգամ 18 ամսուան մէջ։ Այսչափ պատահարաց և թշուառութեանց մէջ մարդ մը գտնուեցաւ որ նախանձամութիւնն եղաւ Պուրպուր քաղաքին և համանուն դիւղին. մի՛ կարծէք որ աս մարդը քաղաքապետն էր տեղւոյն կամ վարժապետը կամ ժողովրդապետը, կամ մեծկակ գործարանի մը տնօրէնը և կամ դէթ հարուստ կալուածատէր մը, ո՛չ, այս մարդը պարզապէս

սայլագործ աշխատաւոր մ'է որուն բո-
լոր հարստութիւնն իր երկու ձեռքերն
են և անունն է Լուի Վրոյլան։ Այս
պարկեշտ մարդը 1827ին ծնած՝ միակ
նեցուկն է իր 88 տարեկան հօրը և իր
75 տարեկան մօրը. ասոնցմէ զատ իր
խնամոյ ներքև ժողոված է նաև իր
հիւանդոտ եղբայրն ու քենին և իբր թէ
այս քառապատիկ բեռը բաւական չէր՝
այն կողմանց բոլոր աղքատներուն խը-
նամքն ալ դարձեալ իր վրայ կեդրոնա-
ցուցած է։

Համաճարակ տօլէոոյէ ժամանակ
Պուրպուրի և շրջակայից մէջ տուն չմը-
նաց ուր հիւանդութիւնը չմտնէր. ա-
նոնք որ այս պատուհասէն զերծ կը
մնային՝ արք և կանայք կը փախչէին և
առողջ կլիմայ մը կը բնակէին. իսկ Լուի
Վրոյլան լքեալներուն խնամատար հիւան-
դապահն էր. ամբողջ գիշերներն անոնց
քով կանցուներ, անոնց դեղ կը բերէր,
ուտելիք կը բերէր, հարուստ տուները
կերթար անոնց համար ստակ կը մուրար,

խնամք կը տանէր ամենուն, ծառայու-
թիւններ կը մատուցանէր, վէրքերնին
կը պատէր և մեռեալները կը թաղէր։
Բազմաթիւ բնակիչք կը յայտարարեն որ
իրենց կեանքը պարտաւոր են այս մար-
դուն. ասոնց վկայութիւններն ունինք
կատարեալ միամիտ և խիստ սրտառուչ։
Վրոյլան միևնոյն կերպով վարուեցաւ
Ֆոլի ժամանակ և ֆիեվրիֆոյէ ճարակ-
ման ատեն. փորձառութեամբ ճարտար
հիւանդապահ մ'եղած էր։ Երբ հիւան-
դի մը վէրքը այնքան ղղուելի վիճակ մը
կառնէր որ ընտանեաց մէջ կանայք ան-
դամ չէին համարձակեր զայն խնամելու,
Մ. Վրոյլանը կը բնտռէին և նա կը վազէր
կուգար։ Կը պատմեն որ տան մը մէջ
ուր հայր, մայր և գործաւոր որդի մը,
ըսել է երեք անձ կը բնակէին, տօլէոան
մտնելով, նախ հայրը կը բռնուի, անկէ
ետքը որդին կը պառկի, և մայրը վախ-
նալով կը ձգէ կերթայ տունէն։ Վրոյլան
կուգայ անոր տեղը կը բռնէ։ Բայց Վր-
ոյլան միայն հիւանդութեանց չէ՝ որ կը

դիմադրաւէ, այլ ամեն տեսակ քաջասիրութիւն ունի նա։ Ուրիշ տարու տղայ մը ջուրի մը քով որսալու դրաղած ատեն կը սահի կիյնայ գետը. գետին լայնութիւնը 6 մեթր է և խորութիւնը 3. Վրոյլան՝ անդ մնա իր գործարանէն կը տեսնէ, կը նետուի ջուրը և տղան կազատէ։ Հրդեհ պատահած ատեն Վրոյլան առաջինն է օգնութեան հասնողներուն, և վերջին՝ ցրուողներուն, և ուր ամենէն մեծ վտանգ կայ, ա՛յն տեղ կը տեսնաս զնա աշխատութեան մէջ. ականատես վկայ մը կը հաստատէ որ տեսած է անոր ճահիճի մը մէջ մինչև կէս մէջքը սուղեալ ջրհաններու ջուր հասցունելու համար հինգ ժամ շարունակ աշխատիլը. այս երկարատև ճիգ ու աշխատութենէն ետքը բոցոյ ամեն կողմէն վերածնութեան և ճարակման առջին՝ յուսահատութիւնը կը տիրէր բոլոր բնակչաց վերայ. որք այլ ևս զանգակներուն հնչիւնէն ալ չէին կրնար սթափիլ և ոգևորիլ. բայց Վրոյլան տղատ կը

ձնար այսպիսի տկարութենէ և կը շարունակէր իր ջանքերը մինչև վերջը։ Նոր աղէտից լուր մ'առաջին պէս Վրոյլան կը վազէր կերթար օգնութեան, աշխատողները եռանէն կերթային և կը հնազանդէին իրեն և անոր օրինակով կը քաջալերուէին։ Իր հայրենակիցները Վրոյլանին յարմարագոյն վարձատրութիւնը ըրին՝ տեղւոյն բարեգործական գրասենեակին վարչութիւնն իրեն յանձնելով։

Գիտութեանց մէջ, ինչպէս նաև արուեստից և նոյնիսկ քաղաքագիտութեան մէջ, մասնաւորութեանց մոլութիւնն ունինք մենք։ Ի հնումն այսպէս չէր. Տէքարթ իմաստասէր էր, մաթէմաթիկոս միանգամայն և բժիշկ։ Պետական մարդիկ, ինչպէս Ռիշլիէօ, կ'ամչնային անդէտ դտնուիլ վարչական օ՛ր և է ճիւղի վերաբերեալ գործոց։ Մեր սայլագործ գործաւորը զորմէ կը խօսինք, իր ժամանակին մարդն ըլլալու համար, բարեգործութեան մէջ իր մասնաւոր ճիւղն

ունենալու էր։ Մարդկութեան բարե-
բարները ունինք որ միմիայն որբերու կամ
հիւանդաց կամ բանտարկութենէ ազա-
տեալ պատանիներու կը յատկացնեն ի-
րենց բարիքը. «Երբէք դատապարտու-
թիւն կրա՞ծ ես, ողա՛ս. — երբէ՛ք, տէր
իմ, — ուրեմն շնորհաւորութիւնս կը
յայտնեմ, բայց քեզի համար բան մը
չեմ կրնար ընել»։ Ուրիշներ դպրոց կը
հիմնեն կամ մատենադարան կը հաս-
տատեն։ Այլք միմիայն ազատիչ են,
բայց ո՛չ դարձեալ Մ. Մէկուին պէս որ
ամենօրեայ դիւցազնութեան դաղանիքն
իրեն վերապահած է. բայց սա՛ ալ ըս-
տոյգ է որ ամեն բանի մէջ աստիճան
կայ, առաքինութեան մէջ ինչպէս նաև
հանճարոց։ Մ. Վրօյլան, անձի խտրու-
թիւն չճանչնար. բաւական է որ մարդ-
նեղութեան մէջ դտնուի, նա հիւանդա-
պահ է, բժիշկ է, ազատիչ է, եթէ
պէտք ըլլայ նաև ջրհանակիր է, և այս
վերջին վիճակին մէջ թերևս ամենէն ա-
ւելի յաջողակ։ Քաղաքապետն, թա-

ղապետական ժողովն և ժողովրդապետ
քահանայն իրաւամբ կը վկայեն անոր
համար թէ «նախախնամութեան դէր կը
վարէ երկրին մէջ»։ Ակադեմիայն զա-
նոնք պիտի ուրախացնէ, ինչպէս նաև
Վրօյլանին անթիւ բարերարեալներն որ
մեզ 'ի վկայութիւն դիմեցին, անոր ընծայելով 1000 ֆրանք արժողութեամբ առաքինութեան չքադրամ մը։

Մօնթիյօնի հաստատութեան շնոր-
հիւ Ակադէմիան 500 ֆրանքնոց բաւա-
կան բաղմաթիւ չքադրամներ ալ կը
պարգևէ։

ՕՐԻՈՐԴ ՄԱՐԻ ԲՐԱՏԷԼ.
ՕՐԻՈՐԴ ՄԱՐԻ ՇԻՐԱՔ

Ահաւասիկ երկու վարժուհիք, օրի-
որդ Մարի Բրատէլ 'ի Կոէդ՝ որ իր ար-
հեստին պարտականութիւնները զար-
մանալի անձնուիրութեամբ անպակաս
կատարելէ ետև, իր երկարատև պաշ-

տման միջոցին չդադրեցաւ երբէք խը-
նամք տանելէ նաև հիւանդաց և չքաւո-
րաց իրը ճշմարիտ քոյր մը դթութեան։
Եւ օրիորդ Մարի Շերաք, վարժուհի
'ի Կռօ-Շաստան որ միևնոյն առաքինու-
թեանց գործնական օրինակներն ընծա-
յելէ զատ, իր կարողութեան չափուն
չնայելով, երկու խուլ և համր աղքատ
աղջկունք ձրիաբար իր տունն ընդունեց
և անոնց դասատարակութեան խնամք
տարաւ։

ՕՐԻՈՐԴ ՄԱՐԻ Ֆ. ՊՕՍԱՌ

500 ֆրանքնոց չքաղրամ մ'ալ օ-
րիորդ Մարի Ֆիլիբին Պօսառին կ'ընծա-
յենք. հասարակաց օգնութեան վարիչ-
ներուն կողմէն իր խնամոյն յանձնուած
որբերուն տարած մայրական հոգածու-
թեանն 'ի վարձ. հռչակաւոր բժիշկ մը
ազգէն հանկանց կ'անուանէ զնա. տան
և չորս ռուշէնէ (սակորները ծռած) վոխ
տղաք անոր կը պարտին իրենց կեանքը։

ԺԱՆ ՍԷԼԷՍԹԷՆ ՌՕԼ

500 ֆրանգնոց չքաղրամ մ'ալ Ժան
Սելէսթէն Ռօլի կուսանք՝ որ քարակոփ
է 'ի Քասթիլլօն, Ալժէրիի մէջ։ Ասոր
պատմութիւնն ընեմ ձեզ համառօտիւ։
Իր վարպետը, որոյ հետ Ափրիկէ դաղ-
թած էր, չկրնալով դիմանալ աշխատու-
թեան, կլիմային ազդեցութեան և թե-
րևս՝ նաև ի դերև եկած ակնկալութեանց
կսկծոյն, կը մեռնի և այրի մ'ու որբեր
կը ձգէ անտէրունչ և անճար այն օտար
և հեռաւոր երկրին մէջ։ Ռօլ այս ըն-
տանիքը կընդունի իր խնամոյ ներքև,
իր աշխատութեանց արդիւնքն անոր կը
սեպհականէ և ճշմարիտ հօր մը պար-
տիքը կը կատարէ։ Ինք արտաքոյ կար-
գի ճարտար գործաւոր մ'ըլլալով երկու
մլոցանակ ընդունած է տիեզերական ար-
ուեստահանդէսին մէջ. նա՝ կրնար վաս-
տկածը պահել և հարստութեան հաս-
նիլ, բայց ամենայն ինչ իր որդեգրած
ընտանեաց յատկացուցանել արժան դատեց։

Ակադեմիայն 500 ական ֆրանգնոց չքաղրաաՀներ կը շնորհէ հինգ սպասուհեաց որ իրենց տերանց նեցուկ և խնամողն եղած են, խոնարհ անձնուիրութեամբ, զոր յօժարակամ պէտք է վարձատրել զի սրտի ազնուագոյն բարեմասնութեանց նշանն է, այս արժանաւոր սպասուհեաց անուններն են 1° ՄԱՐԻ ԺԱՆ ՔՕՇԱՌ (Լանիյօնցի) 2° ԼՈՒԻԶ ԷԼԻԶԱՊԷԹ ՔՐԷԹԻԷՆ (Շամպրիցի), որ 30 տարիէ 'ի վեր անդամալոյծ պառաւի մը ծառայութեան մէջ կը յարատևէ անվարձ։ 3° ԹԷՐԷԶ ԿԷՌԱՆ (Մօռսալինցի), 4° ԺԱՆ ԲԷՐԻՆ ԿՕԹԻՑԷ (Լիւսէյցի), որ ամբողջ կեանքը ծառայութեան մէջ անցուցելով իր վաստակովը իր չորս կողմը բարերարութիւն սրփռելու հնարը գտած է։ Ժան Կոթիյէ նշանաւոր հանդիսացաւ նաև հրդեհի մը ժամանակ և իբր հետևանք ալ ձեռքի զօրութիւնը կորսնցուց։ Մեր մրցանակը զանի կերթայ դանել 'ի խոր ծերութեան, զի նա այսօր ութսուներեքամեայ է։ 5° ԷՕԺԷՆԻ ԻԻՐԺԱՆ ՎԷՐՏԻԷԼ, որում միևնոյն մրցանակը կուտանք՝ Կուատալուբցի խառնածին մի է։ Սա իր տիրուհւոյն կարի յարեալ, Գաղիա կուգայ անոր հետ, հակառակ յորդորանաց և աղաչարարութեանց իր ընտանիքին։ Տիրուհին կամուսնանայ 'ի Գաղիա. Էօժէնի կը հակառակի այս ամուսնութեան, անոր դժնդակ և անխուսափելի հետևանքը կը նախատեսէ և ցաւ 'ի սիրտ կը պատուի քովէն։ Էօժէնիին բոլոր նախատեսութիւններն կը կատարուին, շատ չ'անցնիր թշուառ տիկինը Էրկանը չարաչար վարմանց չդիմանալով և յ'ամենայնէ կապտեալ կը փախչի կ'ապաւինի իր նախկին սպասուհւոյն քով, որ չը դանդաղիր բաժնել անոր հետ իր անկողինն ու չքաւորութիւնը։ Գաղթածին տիկինը կ'այրիանայ և կը վերադառնայ 'ի հայրենիս 'ի Կուատալուբ, իր ստայուածոց նչխարքը կը հաւաքէ, և փոքրիկ առուտուրի մը կը ձեռնարկէ. Էօժէնին հետը կերթայ, կրպակին պա-

հակը և սպասուհին կըլլայ, ամեն բա-
նի կը հանի, կը հալի, կը մաշի, բայց
անօգուտ. երկու թշուառ ընկերք չեն
կրնար ճողոպրիլ կործանմանէ, կը
փախչին և կը վերադառնան Գաղիա,
ուր Լօժէնի փոքրիկ գործ մը կը դանէ,
բայց տիկինը այնչափ ձախողանաց չդի-
մանալով կը մեռնի, և հաղիւ թէ աչ-
քերը կը փակէ, պարտատէրները կու-
գան և կը դրաւեն տանը գաւազ կա-
բասիքը։ Լօժէնին այժմ պառաւացեալ
և աչքերը տկարացեալ հաղիւ կը հանի
իր աւուր պարէնը ճարելու։

Ակադեմիան միւնոյն ցուցակի մէջ
կը ղետեղէ այսինքն 500 ֆրանգնոց
շքադրամներ կը բաշխէ այն անձանց, որ
իրենց ընտանեաց անձնուիրութիւնին
դիւցազնական աստիճանի մը հասցուներ-
էն զատ ազգատին ծառայութիւն մա-
տուցանելու միջոց և ժամանակ դտած-
են։ Այս պատուոյ ցուցակին մէջ կը դը-

նենք Սէսիէօ քաղաքէն Մատամ Ռիվուար
այրի կինը որ պարզապէս կարկատիչ
մ'է, Մատամ Պօտուէն և Մատամ
Ռուա երկուքն ալ նոյնպէս այրի և
երկուքն ալ Փարիզցի։ Մաքի Ալֆօն-
սին Պուա՝ որ ։օէ՝՝՝

ԱՊԼ ՄԱՅԵԱՐ

Ակադեմիան ժԷՖՖրէ հաստատած վարձատրութեան մրցանակը որ 1000 ֆրանգի արժէք ունի, կը յատկացունէ Սէն ժիւլիւէն տը Ֆոնսէլի՝ Աբբա Մայեառի։ Ապէ Մայեառ իր կեանքը բարեգործութիւն ընելով անցուց. Մուաղտոնի մէջ համաճարակ սեաւ ծաղկի հիւանդութեան ատեն անոր դեղեցիկ վարմունքը մանաւորապէս հռչակ հանած էր։ Սէն-Միշէլի մէջ քաջասրտութեամբ ծովը նետուեցաւ և մահուանէ ազատեց մարդ մը որ ալէկոծութեան ժամանակ անխոհեմութեամբ ծովը մըտած էր լուացուելու, և գլուխը դառնալով խեղդուելու վտանգին մէջ էր։ Բայց առաւել քան զայս ամենայն՝ Ապէ Մայեառի զինուորական գործերն են որ Ակադեմիան 'ի գութ շարժեցին։ 1870-71ի աղէտալից պատերազմին ժամանակ Ապէ Մայեառ կամակար կ'ընկերանայ Լուսաւ Էնֆէռիէօռի շարժականաց երկ-

որդ վաշտին՝ անվարձ և անպաշտօն և մինչև վերջը իր ընկերներուն վտանգի մէջ զինակից և տառապանաց մէջ հայր կը հանդիսանայ. սա՝ զուարթութեամբ կը քալէր վաշտին առջևէն, գիշերը ձիւներու մէջ կը պառկէր, կռուի ժամանակ գրեթէ բանակին ճակատը կը դտնըուէր որպէսզի վիրաւորեալները ժողովելու և խնամելու կարող ըլլայ։ Հիւանդաց խնամք կը տանէր, և անոնց դեղ և ուտեստ ճարելու համար ամեն ջանք 'ի գործ կը դնէր։ Կը հաւաստեն թէ մէկ քանի օր շարունակ առանց սնունդի մնացած է իր ոտճիկը պարտասեալ և կարօտ զինուորաց բաժնելով։ Սա՝ երբէք վերք չ'առաւ թէև շարունակ գնդակներու մէջ էր. բայց բրուսիացւոց ձեռքն ինկաւ և տաժանելի դերութիւն մը կրել պարտաւորեցաւ և խաղաղութեան ժամանակ վերադարձաւ իր ընտանեաց քով պարտասեալ և արիւն թափելով։ Իր վաշտին զինակակից ընկերները խնգրեցին Ակադե-

միայն սրտառուչ նամակաւ մը անոր արժանաւոր մրցանակ մը ղրկ Ակադեմիան բարեհաճի է նմա շնորհել։

ՄԱՏԱՄ ՄԻՆԻԷ

Մատամ Մինիէ այն առատասիրտ տիկիններէն է, որք չեն կրնար տառապանք մը նեղութիւն մը տեսնել առանց օգնութեան փութալու։ Ինք ունեւոր չըլլալով իրեն անհրաժեշտ պիտոյքէն մաս մը կը հանէր թշուառաց, և եթէ պէտք ըլլար՝ անոնց համար ողորմութիւն կը մուրար. պաշարման ժամանակ իր դործովը նշանաւոր հանդիսացաւ, իր հնարամտութեան և փութոյ եռանդեան շնորհիւ ուտելիք ըմպելիք ձեռք բերելու ճարը կը դտնէր և իր չորս կողմը կարօտելոց կը բաժնէր. բաղում կարօտեալ ընտանիք անոր կը պարտին իրենց կեանքը օրոյ կոպտառնար սովամահ։ Մարտի 18 էն ետքը իր

ամուսինը որ ստիկանութեան պաշտօնատունը դործակալ էր՝ Վէրսայլ դաղթել պարտաւորեցաւ իր հրամանատարաց հետ. իսկ մատամ Մինիէ Փարիզ մնաց՝ ուր կը պարտաւորէր մնալ Սիւռէն փողոցին մէջ առևտրական տան մը անօրէնութեան պաշտօնին պատճառաւ։ Իր ամուսինը տեսնելու փափաքը և ասոր անոր օդտակար ծառայութիւններ ընելու բուռն դդացմունքը զինքը կը պարտաւորէին յաճախ Փարիզէն Վէրսայլ երթալ և վերադառնալ. ճանապարհորդութիւն՝ որ ազատ չէր վտանդէ, նոյն իսկ կնոջ մը համար. բայց նա հինդանդամ կատարեց այս ճանբորդութիւնը, նամակներ բերելով հետը որ բաւական էին զինքն 'ի մահ դատապարտել տալու եթէ իր վրայէն դտնուէին։ Վէրսայլէն ամեն անդամ ճանբայ չելած՝ պաշտօնատունները կերթար կը ներկայանար և ամեն մարդ կը փութար անոր միջոցաւ լուր հաղորդել իրեն սիրելի բացակայից. սոյն ծառայութեան փոխարէն

Մատամ Միւնիեէ բնա՛ւ ինչ չ'էր ընդուներ և ո՛չ իսկ կառավարութենէն։ Օր մը վարչական գլխաւոր պաշտօնեայ մը որ անոր նիւթական համեստ վիճակը լաւ կը ճանչնար, համարձակեցաւ ըսել. «Մատամ Միւնիեէ՛, դու գիտես որ տէրութիւնը իրեն եղած ծառայութիւններուն վճարքով կը փոխարինէ. բաւական ժամանակէ 'ի վեր մենք քու պարտապանդ ենք, ըսէ՛ ինծի, կ'աղաչեմ ի՞նչ պէտք ունիս». «Օ՜, տէր իմ, պատասխանեց տիկինը զուարթութեամբ, բնաւ դժուարութիւն չէի ցոյց տար աշխատութեանս փոխարէն վարձ ընդունելու եթէ միմիայն այս ըլլար. բայց դուք գիտէք որ ես ձեզի համար ամեն անգամ կեանքս վտանգի մէջ կը դնեմ». պաշտօնեան այս խօսքէն զգածուելով Տիկնոջ ձեռքը սեղմեց 'ի ցոյց երախտագիտութեան։ Վերջին ուղևորութեան ժամանակ Փարիզի Հասարակականաց դինուորները Մատամ Միւնիեէն բանակի գինեվաճառի մը օթևան մտցուցին և

մանրախոյզ քննութեամբ ամեն կողմը որոնեցին. Մատամ Միւնիեէ հինգ նամակ ունէր վրան, բայց ա՛յնքան աղէկ պահած էր և քննութեան ժամանակ ա՛յնպէս անխռով կեցաւ որ ապարդիւն եղան դինուորք. ստոյգ է որ այն օրը Մատամ Միւնիեէն շատ մօտէն տեսաւ զմահ։ Բայց վերջապէս այս յաճախ երթևեկները իր թաղին իշխանական պաշտօնէից ուշադրութիւնը գրաւելով, բարեկամին մէկը գաղտնապէս իմաց տուաւ որ գինքը բանտարկելու հրաման եղած էր, որով մէկ քանի օր մահաբեր երկիւղի մէջ ապրեցաւ. մայիս 22ին երբ մեր զօրքերուն մէկ մասը արդէն մտեր էր 'ի Փարիզ, մէկ քանի սպառազէն ապստամբներ Մատամ Միւնիեէի դրասենեակը կը խուժեն և հրաման ընելով իրենց հետևիլ, կ'առնեն կը տանին հետերնին մինչև Պուլվառի և Վիլլեվէքի փողոցին անկիւնը. մէջերնուն մէկը որ ոստիկանի տեսուչի պէս բան մը կ'երևար, յանկարծ կը հրէ զանի պա-

տի մը տակը և ծայրը դրե՛թէ մարմնոյն դպցունելով ռէվոլվէր մը կը պարպէ վրան. իր ընկերներն ալ անոր օրինակին կը հետևին և Մատամ Միւնիեէ կիյնայ այն տեղ. մարդասպանք փախուստ կուտան կարծելով որ գործած ոճիրնին կատարեալ է, բայց Մատամ Միւնիեէ վիրաւորեալ էր միայն, մեր ղինուորները զայն դատան դետինը փրռուած, արիւնաթաթախ, և Պոժոնի հիւանդանոցը փոխադրեցին. ալ ձեռքը որ դնտակով հարուածեալ էր, թէև վէրքն աղէկցաւ, բայց անշարժ և կարկամեալ մնաց և ձախ սրունքը վիրաց հետևանքէն այնքան դէշցաւ որ կտրել պարտաւորեցան և խեղճ անկեալը ութ ամիսէն հաղիւ կրցաւ հիւանդանոցէն ելնել, ոտքին մէկը ամբողջ և ձեռքին մէկուն գործածութիւնը կորսնցուցած, և այսպէս անդամաղուրկ սկսաւ կրկին ձեռք առնել իր նախկին բարեգործական սովորութիւնը. ա՛յս է ահա Մատամ Միւնիեէի համառօտ պատմութիւնը, զոր անկարելի է լսել առանց հիացման և գթութեան շարժելու. այս եղելութիւնները երկու տարի առաջ տեղի ունեցած ըլլալով Մատամ Միւնիեէ չկրնար Մոնթիյոնի առատաձեռնութեանց մասնակցելու։ Ակադեմիան չկարծէր զնա արժանապէս վարձատրած ըլլալ, Սուռիոյ կտակաւ հաստատուած մրցանակներէն հատ մը իրեն ընծայելով որ է 1000 ֆրանգնոց չքաղրամ մը։

Մառի Լանի կտակն ալ կընէրէ մեղ 300 ֆրանգնոց մէկ քանի չքաղրամներ բաշխել։

ՄԱՌԻ ՄՕՌՕ

Մառի Մօռօ օրականով աշխատող սպասուհի, Սէն Լօռան Տէ զՕթէլ քաղաքէն, 28 տարեկան հասակի մէջ, տասը տարի անընդհատ խնամեց իր հայրը որ երեսին վրայ տաժանելի քաղցկեղով մը ախտացեալ էր։ Այս աղջիկն ունէր միանգամայն և ունի տակաւին այսօր

իր խնամոցը ենթարկեալ 73 տարեկան և աջ ուսի ոսկորներուն բեկբեկման պատճառաւ աշխատութեան անկարող մայր մը և ապուշ ու լուսնոտ եղբայր մը։ Մառի Մօռօ ցերեկներն իր տերանց ծառայութեանը կերթայ, իսկ գիշերները իր տան սպասարկութիւնը կընէ, հիւանդները կը խնամէ և հետեւեալ օրուան կերակուրնին կը պատրաստէ։

ԲԻԷՌ ՄԷԼԻՆ

Նմանօրինակ է նաև Բիէռ Մէլինի պատմութիւնը, որ մշակուհի մ'է Ալօնի մէջ։ Նոյնպէս ՔԼԱՌԻՍ ԼԷՄԼԷՆԻՆ որ դերձակուհի մ'է 'ի Նանդ, և ՍԷՌԱՖԻՆ ՎԻՆԵՕԻՆ որ սպասուհի է 'ի Քոնֆօլօն։ Նոյնպէս նաև ՕՆՕՌԻՆ ՔԼՕՏԷԼԻ վարքը որ կտաւադործ մ'է 'ի Պլամոն և որոյ համար զինքն յանձնարարողները կըսեն թէ «երբէք կենացը մէջ զօրութիւն, առողջութիւն, երջանկութիւն տեսած չ'է, բայց Աստուած պարգևած է անոր փոխարէն վսեմ սիրտ մը»։

ԲԻԷՌ ԺՈՒՌՏԱՆ

Նոյնպէս Բիէռ Ֆրանսուա Ժուռտան, որ 300 ֆրանգնոց առաքինութեան շքադրամ մը կընդունի, Կռանվիլի նաւահանգստին մէջ փոքրիկ պաշտօնական մ'է. սա՛ միայնակ և իր չընչին ամնականովը, հայր, մայր, քոյր և երկու քեռորդի սնոյց և խնամեց, և քեռորդիներէն մէկը՝ որ աղջիկ էր՝ ամուսնացոյց և միւսը բաւական կրթել տուաւ և հասցուց հեռու տեղեր ճանապարհորդող նաւերու նաւապետութեան աստիճանի. դժբաղդաբար երկուքն ալ վաղամեռիկ՝ մէկ մէկ որբ զաւակ ձգեցին իրեն, և Ժուռտան առանց տաղտկանալու և առանց յուսահատելու անոնք ալ խնամել սկսաւ հայրական դորովով։

ՎԻԼՀԷԼՄ ԵՒ ՔԱՌՕԼԻՆ

Ակադեմիան 400 ֆրանգի չքաղ-
ըամմը կը բաժնէ հաւասարապէս Վիլ-
հէլմ Օթէֆանիոս և Քառօլին Շառդ-
ռէն երկու ծառայից մէջ որ Պլուա քա-
ղաքը երեսուն և հինգ տարի երկուքը
մէկէն ծառայեցին միևնոյն տիրոջ։ Ի-
րենց տէրը հռչակաւոր բժիշկ մ'էր և
ճոխութեամբ կեանք կը վարէր։ Ի սկզբ-
բան երկու ծառայակիցք կրցան խնա-
յողութեամբ ստակ դիզել, բայց վերջը
բժիշկն իր առողջութիւնը և հարստու-
թիւնը միանգամայն կորսնցուցնելով գոր-
ծերը քիչցան և յաճախորդաց թիւը
պակսեցաւ։ Վիլհէլմ և Քառօլին չ'ու-
զեցին ձգել երթալ և դրեթէ իրենց
տիրոջ կամացն հակառակ և առանց ինչ
վարձք ընդունելու կեցան անոր քովը։
Վերջապէս բժշկին ծերութիւնն ու վատ-
առողջութիւնը բոլորովին հեռացուցին
իրմէն վերջին յաճախորդները, և այն
ատեն սկսաւ անձնուիրութեան մը տե-

սարանը որու նմանն առաւել վիպասա-
նութեանց մէջ կը տեսնուի քան թէ ի-
րական կեանց մէջ։ Երկու ծառայակիցք
իրենց տիրոջն այնպէս հաւատացուցին որ
իբր թէ տակաւին հարստութիւն և
ապրուստ մնացեր էր, և այնպէս հաւ-
ատացուցին նաև հասարակութեան, բայց
այս հարստութիւնը 30 տարի յառաջ
իրենց խնայողութեան արդիւնքն էր որ
իւրաքանչիւրոյ համար 5000 ֆրանգի
կը մօտենար։ Մենք ասոր վաւերական
ապացոյցներն ունինք։ Աս դումարնե-
րուն վրայ կ'աւելցուցին նաև դուրսը
փոքրիկ աշխատութիւններով ձեռք բե-
րած արդիւնքին։ Վերջապէս բժիշկը
88 տարեկան հասակի մէջ հոգին աւան-
դեց իրենց գիրկը և երկուքն ալ լացին
անոր վրայ։

Մեր հոյակապ ընկերն Մ. Օկիւստ
Պարպիէ՝ մեր սովորական տեղեկաբեր
Մ. տը Շամբանեիի բացակայութեանը
պատճառաւ՝ առաքինութեան մրցանա-
կի ընտրելիներուն վրայ տեղեկագիր

ներկայացուցած ատեն տխրութեամբ կըսէր մեղի «Տէ՛ր Աստուած, հնա՞ր է որ այսքան թշուառութիւնք կեցած ըլլան Գաղիոյ մէջ»։ Այո՛, պատուական ընկեր, կա՛ն այս ամեն թշուառութիւնք Գաղիոյ մէջ, կա՛ն և պիտի ըլլան միշտ ապուշներ, լուսնոտներ՝ հաշմանդամներ և պիտի գտնուին միշտ որբեր և թշուառներ, բայց խոստովանէ՛ որ կան նաև վեհ սրտեր։ Ակադեմիան կը փափաքէր ունենալ ձեռքերը լեցուն մրցանակներ արպէս դի զամենն արժանապէս վարձատրէ, և նա՛ որ յանուն Նորա կը խօսի Ձեզ, կը ցաւի միշտ հակիրճ յիշատակութեամբ մը բաւականանալ ստիպուելուն համար փոխանակ ընդարկար և մանրամասն պատմելու այս աղնուական կեանքերը որ լի են պանծալի օրինակներով։ Ահա՛, Տեսա՛ք իմ, Ձեզ ցոյց տրուի ի՞նչ որ մարդ կրնայ ընել ոչնչով, ահաւասիկ այն առաքինութիւնները որ կը գործուին մեր շուրջը կամ եթէ կը հաճիք մեզնէ ի խոնարհ կոյս, թէև մեր

վարձատրեալներուն մէջ մէկ հատ մը չկայ որ չըլլայ մեղի հաւասար և թերևս մենէ դերագոյն։ Մենք ատենցմէ մէկ քանին միայն կը ճանչնանք և կը վարձատրենք. բայց հաղարաւորներ կան Դեղեցիկ գործ մը մինչև մեր ականջը հասնելու համար վստահելի վկայող մը պէտք է ունենայ, և այն վկայն Մոնթիյոնի վարձատրութեանց գոյութիւնը գիտցող պէտք է ըլլայ։ Այս Փարիզի մէջ, ղոր արհամարհանօք և քիչ մ՚ալ անմտութեամբ Մեծն Բաբիլոն կոչեցին Հարակամներն, և հարևանցի տեսութիւն ունեցողներն՝ բարուց ապականութիւն միայն կը տեսնեն ի վեր և խատութիւն տենչանաց ի խոնարհ։ Բայց եթէ մարդ բարեկամաբար կամ իբր անշահախնդիր դիտող, մտնէ գործարանաց մէջ, փոքրիկ օթևաններն այցելէ և աղքատիկ անձանց վստահութիւններին դրաւելու չափ բաւական ժամանակ հետերնին կենցաղավարի, կը տեսնէ որ ամենէն դիւրութեամբ և ուրախ սրտիւ տուողներն ա-

նո՛նք են որ իրենց աւուր պարէնը դրժ-
ուարութեամբ կը ճարեն և թէ հաղուա-
գիւտ չեն անոնց մէջ անձնուիրութիւնը
մինչև ի գիւցազնական աստիճան առաջ
տանողներն. կը տեսնէ նաև որ ասոնք
քաջ կըմբռնեն և զգօնութեամբ կը դոր-
ծադրեն ծնողութեան պարտիքը և որ-
դիական գութը. և թէ մեծ հայրը որ
այլ ևս չկրնար աշխատիլ, իր տեղն ու-
նի և առաջին տեղը իր զաւակաց վեր-
նայարկին մէջ։ Շատերն իրենց ծեր ծը-
նողքը անկելանոցի մը մէջ պատսպարել
տալու իրաւունք ունենալով հանդերձ,
առաւել կընարեն քաղցի դիմանալ և
զանոնք իրենց տուն կոչած բնակարա-
նին մէջ քովերնին պահել, քան թէ ա-
նոնցմէ հեռանալ։ Մոլութի՛ւնը, Տեա՛ր-
իմ, միշտ կուզէ ի ցոյց դալ, իսկ առա-
քինութիւնը գինքը ծածկել կը սիրէ,
յաճախ նաև անդէտ է իր ըրածին. գոր-
ծաւորներ բարեկամի մը յուզարկաւո-
րութեան դագաղին ետևէն կերթան,
որը մը կայ անոնց մէջ, ճամբան մէկը

տղեկին ձեռքէն կը բռնէ, և այլ ևս
չթողուր զնա։ Ես կը ճանչնամ բաղմա-
թիւ գործաւորներ որ բարեկամի մը զա-
ւակները իրենց քով ընդունած կը սը-
նուցանեն իրենց բնիկ զաւակաց հետ՝
առանց խտիր դնելու։ Աստուծոյ իրենց
պարգևածին և օրտերնուն իրենց տուա-
ծին մէջ տեղը. իրենք «զաւակս» կը
կոչեն, տղաքը իրենց մէջ զիրար«եղ-
բայր» կանուանեն, և երբ ասոնց դի-
տողութիւն ընող ըլլայ այս մասին, ու-
սերնին վեր վերցունելով կը պատաս-
խանեն թէ «հարկ է սակայն իրարու օգ-
նել»։

Տեա՛ր իմ, հնար չկայ մարդատ-
եաց ըլլալ երբ մարդ կը բաշխէ Մոն-
թիյոնի մրցանակները, և այս պատճառաւ
առաւել կը մեծարեմ այս աղքատաց
բարերարին յիշատակը և զոր կ՚ուզեմ
նաև կոչել մե՛ր իսկ բարերարը։ Այո՛,
մարդիկ բարի են, հերի՛ք է որ ճանչ-
նալ գիտնաս, ատելութիւնը թէ՛ ան-
ձանց վրայ 'ի մասնաւորի և թէ՛ դասուց

վրայ ըլլայ, միշտ մտքի հիւանդութիւն մ'է և ո՛չ այլ ինչ, ատելու չ'է և ո՛չ իսկ մոլիները, բաւակա՛ն է մոլութիւնն ատել։ Բայց ըստ որում այս օր առաքինութի՛ւնն է որ մեզ ատա կը ժողովէ՝ սիրե՛նք զայն, հիանա՛նք անոր վրայ, աշխատի՛նք անոր նմանիլ և անոր ընդհանրացման համար մեր վարձատրութեանց չափաղանց զօրութեանը չ'վստահելով հանդերձ՝ մեծարենք այն հաստատութիւնը որ առիթ կ'ընծայէ մեզ ամեն տարի մէկ քանի արի՛ սրտեր ուրախացնելու, մէկ քանի դեղեցիկ գործեր ի լոյս հանել և հռչակելու, և որ կը պարտաւորէ զմեզ որոնել և տեղեկանալ ընկերութեան մէջ մնացած անկատարութեանց, թշուառութեանց, և հասկընալ ինչ որ կարող է կատարել միայնակ կամքը։

Գին 100 փարայ մէճիտ

22864-22870

<< Ազգային գրադարան
22870
NL0056510

<< Ազգային գրադարան
22868
NL0056513

2073

<< Ազգային գրադարան
22869
NL0056509

<< Ազգային գրադարան
22865
NL0056512

<< Ազգային գրադարան
22867
NL0056508

<< Ազգային գրադարան
22864
NL0056511

<< Ազգային գրադարան
22866
NL0056507